

ՍԵՌԱՅԻՆ ԽՆԴԻՐՆԵՐ

II.— ՍԵՌԱՅԻՆ ՄԵՐՁԵՑՈՒՄԸ



Չափահասութեան տարիքը կլիմայի, կենցաղի և սեռի հետ կապ ունի:

Աղջիկները մանչերէն աւելի կանուխ կը հասունանան: Տաք կլիմայի մէջ ապրողներ սառուցեալ գօտիի բնակչութենէն աւելի շուտ արթունքի կը թեւակոխեն: Քաղքենին գիւղացիէն աւելի առաջ կը հասունայ:

Արրունքի տարիքը 12—16 է առհասարակ: Սակայն մի քանի տարի ևս պէտք է՝ սեռային գործարաններուն կատարելագործման համար: Հետևաբար 19—20 տարեկան անհատներ ի վիճակի են աժուանանալով սեռային մերձեցում ունենալ:

Սեռային մերձեցումի քանակը որոշել շատ դիւրին չէ: Ու անհատէ անհատ կը տարբերի այդ քանակը:

Որոշ օրէիք մը գծել և շաբաթը այսքան ըսել շիտակ չէ: Ամէն մարդ հետեւեալ կէտերուն ուշադրութիւն դարձնելով իրեն համար կրնայ օրէնք մը գծել:

1— Սեռային մերձեցումէ առաջ բնական փափաք ունենալու է մարդը: Բռնազբօսիկ ճիգերով արթնցնելու չէ այդ փափաքը:

2— Մերձեցումի ատեն հաճոյք զգալու է և վերջը զոհացում զգալու է անհատը:

3— Մերձեցումի վաղորդայնին ֆիզիքայէս և հոգեկանապէս առողջ և հանգիստ զգալու է: Ուրեմն այս երեք պայմաններով դիւրին է ճշդել քանակը:

Յղութեան չրջանին մէջ մերձեցումը չնասակար է: Տեսէք կենդանիները յղութեան ատեն հեռու կը մնան մերձեցումէ: Օրինակ առնենք անբան կենդանիներէն:

Արուեստական միջոցներով գրգռուիլ, այր և կնոջ միջեւ փոխադարձ փափաքին առանց կարեւորութիւն, տալու մերձեցում կատարել, բռնազբօսիկ ճիգերով սեռային չափազանցութիւններ կատարել՝ չնասակար կացութիւններ են: Զգուշանալու է այդպիսի արարքէ:

Դարձեայ կրկնենք թէ չափաւոր ժուժկալութիւնը անձնատ է: Սեռային ծայրահեղութիւններէն շատ աւելի փոքր չարիք մըն է, — եթէ երբեք չարիք է ժուժկալութիւնը: